




## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





916

917

918

919

920

921

922

923

924

613

---

F-76









ՕԳՏԱԿԱՐ ՏԵՏՐԱԿՆԵՐ

Ա.

ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ա.

ՄԻՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԱՑԻՆ

ՑԵՍԱԿԻ



ԳՈՐԾԱՐԱՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԱՄ Ն. 12

(1870)





ՕԳՏԱԿԱՐ ՏԵՏՐԱԿՆԵՐ

Ա .

---

572

ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ  
ԳԱԹՐՁԱԺԻ ԳԱՂՂԻԱՅԻՈՅ

—  —  
Ա .

ՄԻՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՏԵՍԱԿԻ

—  —





572

ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԳԱԹՐՅԱԺԻ ԳԱՂՂԻԱՅԻՈՅ

Ա.

ՄԻՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՏԵՍԱԿԻ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Ս. ՂՈՒԿԱՍԵԱՆ



Կ. - ՊՕԼԻՍ

Ի ԴՈՐԾԱՐԱՆԻ ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԱՄ Ն՞ 12

( 1870 )

1614

2833-57

## Ա Ջ Դ

Ներկայ տետրակս, որ վէճաանի կայսե-  
րական Անասնանոցին, Գաղղիոյ վեհափառ  
Թագուհւոյն պաշտպանութեանը տակ կազ-  
մուած Ժողովրդական Կաճառին մէջ, Գաթր-  
Փաթի Գաղղիացւոյ՝ «մարդուս պատմու-  
թեանը» վրայ խօսած ճառերուն առաջինը,  
այն է «մարդկային տեսակի միութեանը»  
վրայ ճսռն է, մեր հրատարակելիք ՕԳՏԱ-  
ԿԱՐ ՏԵՏՐԱԿԱՅ առաջինը կ'ընեմք :

ՀՐԱՏԱՐԱԿԻԶՆ





## ՄԱՐԴԱՐԱՆՈՒԹԻՒՆ

### ԳԱԹՐԲԱԺԻ ԳԱՂՂԻԱՅԻՈՅ

#### Ա .

#### ՄԻՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԱՅԻՆ ՏԵՍԱԿԻ

Պարոնայք .

Գիտութեանց հետեող ընկերակիցներուս իւրաքանչիւրը հոս կու գայ , և կը խօսի ձեր առջև այն նիւթին վրայ՝ որով սովորականապէս կ'զբաղի ինք : Ոմանք կը խօսին երկնից , երկրի և ծովերու վրայ , ոմանք ալ բուսականաց և անասնոց պատմութիւնը կ'ընեն ձեզի : Ես , որ «Միւզէօմի» մէջ մարդկային բնական պատմութեան դասատու եմ , մըտածեցի թէ ի՞նչու համար ես ալ չպիտի խօսիմ ձեզի՝ մարդուս վրայ :

Յայտնի է որ , այնչափ շահ ունինք՝ բուն իսկ մեր տեսակովն զբաղելու , որչափ շահ որ ունինք անասնոց , մինչև անգամ , մեզի խիստ պիտանի եղող անասնոց պատմութիւնը գիտնալու : Մնաց որ , այս վայկենիս , մտքերն անդիմադրելի շարժմամբ մը դէպ ի՛ս այս ուսումը ուղղուած են : Քիչ ատեն առաջ յատկապէս մարդաբանութեամբ , այսինքն մարդկային բնական պատմութեամբ , զբաղող

գիտնական ընկերութիւն և հրատարակութիւն չկար : Այսօր , Բարիլի մէջ միայն , գիտնականներէ բաղկացեալ երկու ընկերութիւն կայ , որոնք մասնաւորապէս իրենց հետազօտութեան առարկայ ըրած են այս գիտութիւնը . և կան նաեւ այս գիտութեան յատկացեալ երկու հրատարակութիւնք : Միւսը օմի մէջ աւելի հին ատենէ ի վեր է , որ մարդաբանութեան դասախօսութիւն կ'ըլլայ : Հոն , այս դասախօսութեան համար այնպիսի հաւաքածոյ (collection) մը կայ , որուն տակաւին նմանը չկայ աշխարհիս մէջ :

Ձեմ վարանիր ըսելու , որ Գաղղիոյ փառաց մէկն ալ սա է , որ այս երեքիկն նկատումով բոլոր աշխարհի օրինակ տուաւ . օրինակ մը՝ որուն կը հետեւին այսօր Ամերիկայի և Եւրոպայի մէջ : Ես ալ փափաքեցայ որ ձեզի այս շարժման մասնակից ընեմ , մարդկային ընտանեաց բովանդակութեան վրայ մէկ քանի խիստ կարեւոր գաղափարներ տալով ձեզ :

Պարոնայք , այս բանը աւելի դժուար է ինձ համար , քան թէ իմ ընկերակիցներէս շատերուն համար : Այս օրէն իսկ պիտի տեսնենք որ բոլոր այս դասերուն բովանդակութեանը մէջ մի միայն մէկ էակի մը , այն է մարդուս վրայ պիտի խօսինք : Հետեւաբար բոլոր այս բանախօսութեանցս մէջ-



տեղը կապակցութիւն պիտի ըլլայ, և այն  
որ նախընթաց դասը լսած չէ, չպիտի կա-  
րենար միշտ աղէկ հասկնալ այն դասը, որուն  
ներկայ պիտի գտնուէր: Այս դժուարու-  
թիւնը բառնալու համար, դիտաւորութիւն  
ունիմ' այս դասախօսութիւնը այն կերպով  
բաժնել, որ ամէն մէկ դաս կարելի եղածին  
չափ լաւ բաժնուած բովանդակութիւն մը  
կազմէ: Ամէն մէկ նստի սկիզբը, պիտի ջա-  
նամ մէկ քանի բառով նախընթաց դասերը  
համառօտել: Եւ կը յուսամ' այս կերպով  
մինչև վերջը հասնիլ, միշտ ըսածներս ա-  
ղէկ հասկըցուցած ըլլալով: Հետեւաբար իւ-  
րաքանչիւր բանախօսութիւն «Ժողովրդական  
մարդաբանութեան մը» մէյմէկ գլուխը պի-  
տի կրնայ համարուիլ:

Կը յուսամ' որ, յետոյ, այս«դասերը կըր-  
նան հատորի մը մէջ ամփոփուիլ, և ես ալ  
պարծանք պիտի համարիմ ինձ, եթէ օր մը  
նա արժանի ըլլայ այն ածականին զոր հի-  
մա գործածեցի, եթէ իրօք ձեր մէջ ժողո-  
վրդական ըլլայ ան:

Քանք հիմա մեր առաջին գլխոյն:

Ըստ որում մեր զբաղմանց առարկայն  
մարդն է, նախ պէտք է որ հարցնենք. թէ  
ի՞նչ է մարդս: — Ասոր պատասխանը տալէ  
առաջ, պէտք է որ մէկ քանի բացատրու-  
թիւններ տամ:

Այս հարցումը խիստ շատ անգամ եղած է ընդհանրապէս Աստուածաբաններէ կամ Փիլիսոփաներէ : Աստուածաբանը ասոր պատասխանած են յանուն վարդապետութեան, և կրօնից, իսկ Փիլիսոփայը յանուն բնազանցութեան (métaphysique) և վերացականութեան : Աւտի պէտք է աղէկ գիտնալ որ ես ոչ աստուածաբանական ճամբուն պիտի հետեւիմ և ոչ փիլիսոփայական, և այս երկու ճամբաներէն բոլորովին հեռու կենայլու մասին, շատ ուշադրութիւն պիտի ընեմ : Միւղէօմի մէջ դասատու չեղած, անասնոց վերաբերեալ ուսմունքներով կ'ըրաղէի, և բնագէտ էի, և իբրեւ բնագէտ «Էնսթիթիւի» մէջ դասատուութեան պաշտօն առի : Միւղէօմի մէջ ինչ որ էի՝ այնպէս մնայի, և այսպէս պիտի մնամ «Վէնսանի» մէջ ալ, աստուածաբանութիւնը՝ աստուածաբանից թողլով, փիլիսոփայութիւնն ալ փիլիսոփայից, և սահման կը դնեմ ինձ ձեզի հետ՝ յանուն գիտութեան և մանաւանդ յանուն բնական գիտութեանց խօսելու :

Հիմա նորէն ձեռք առնենք քիչ մը առաջ բրած հարցումս :

Ի՞նչ է մարդս :

Յայտնի է որ, հարկ չկայ ամենեւին երկար բարակ ապացուցանելու, թէ մարդս ո՛չ հանքային է, ո՛չ բուսական, այսինքն ո՛չ քար

է, ոչ տունկ : Անաստուն է . դարձեալ ո՛չ . բաւական է որ նկատողութեան առնունք ինչ որ կայ 'ի նա : Եւ վստահ եմ ամէնքնիդ ալ այս բանիս վրայ ինձի հետ համամիտ էք :

Մէջերնիդ անշուշտ չկայ մէկը , որ ուզէ բաղդատուիլ եղան մը հետ , որ կորոճայ , խողի մը հետ , որ ցեխերու մէջ կը դաւալի : Այնպէս և ոչ մէկը որ ուզէ շանը կարգը իջնալ , որչափ ալ այս կենդանիս այնպիսի յատկութիւններ ունենայ , որոնց պատճառաւ մարդս զայն իրեն բարեկամ և ընկեր գըտաւ :

Մարդս անասուն չէ : Նա կ'որոշուի անասուններէն զանազան տեսակ բաղմաթիւ և գլխաւոր յատկութիւններով : Բաւական կը համարիմ յիշել հոս իւր «մտաւորական առաւելութիւնը» , որով բանաւոր լեզու մը ունի , և հետեւաբար ամէն ազգ իւր մասնաւոր լեզուն ունի , «գիր» ունի որով կրնայ իւր լեզուն օրինակել , «գեղարուեստներ ունի» որոնց զօրութեամբը կարտայայտէ և կերպով մը կը նիւթականացնէ ինչ որ կը յղանայ իւր երեւակայութեան մէջ :

Նաեւ նշանաւոր կը հանդիսանայ մարդս և անասուններէն կը զատուի երկու հիմնական յատկութիւններով , որոնք ինքը միայն ունի : Գործարանաւոր և կենդանի էակաց մէջ , մարդս է միայն , որ «բարւոյն և չարին վե-



բացեալ զգացումն» ունի, և հետևաբար մարդս է միայն, որ «բարոյական զգացում» ունի, որ «ներկայ կեանքէն ետև բանի» մը կը հաւատայ, որ «իրմէ գերազոյն էակաց» գոյութիւնը կը ճանչնայ, անոնց (այս գերազոյն էակներուն) հաւատալով թէ կրնան իւր գոյութեանը վրայ ազդեցութիւն ունենալ թէ 'ի բարին, թէ 'ի չարն : Եւ այս երկու գաղափարներուն (notion) կը վերաբերի այն մեծ բանը, որ «կրօնք» կանուանի :

Ետքը ձեռք պիտի առնունք «բարոյականի» և «կրօնից» այս երկու խնդիրները : Զանոնք պիտի քննենք, «ոչ թէ իբրեւ աստուածաբան», այլ, կը կրկնեմ խօսքս, «իբրեւ բնագէտ» միայն : Այսօր միայն այս չափ կ'ըսեմ ձեզի, որ ամենուրեք մարդս՝ որչափ ալ վայրենի եղած ըլլայ, «բարոյականութեան» և «կրօնաւորութեան» նշաններ ցոյց տուած է, որոնք ամենեւին անասնոյ մը վրայ տեսնուած չեն :

Հետևաբար մարդս զատ արարած մ'է, որ դարձեալ կ'ըսեմ, իր մտաւորական կարողութեան անթխտելի գերազանցութենէն աւելի, այս երկու մեծ յատկութիւններով կը զատուի անասուններէն. և այս յատկութիւնները միայն մարդս ունի :

Բայց տարբերութիւններն ալ հոգ կանգ կ'առնուն : Սակայն «երբ խնդիրը մարմնոյն

ժրայ է» , այն ատեն մարդս անասուն մ'է , « ո՛չ աւելի ո՛չ պակաս » : Եթէ ձեերու և տըրամադրութեանց մէկ քանի տարբերութիւնները մէկդի առնելու որ ըլլանք , մարդս մեր շուրջը պատող վերին կարգի անասնոց կատարեալ հաւասարն է :

Եթէ ընդհանուր ձևով մեզի հետ չատնանութիւն ունեցող անասնոց տեսակները բաղդատութեան առնունք , « անդամազննութիւնը » մեզ ցոյց կու տայ , որ մեր գործարանները ճշդիւ նոյն են , ինչ որ են անոնցը : Անանկ որ , գրեթէ մարդուս ջիղերուն համապատասխանող ջիղ , և մկանունքներուն համապատասխանող մկանունք կը գտնենք անասնոց կազմութեանը մէջ : Բընախօսութիւնն ալ՝ մեզի կը ցուցնէ , որ մարդուս գործարանները , ջիղերը , մկանունքը , ճիշդ այն կերպով կը վարեն իրենց պաշտօնը , ինչպէս որ անասուններունը :

Ասիկա գլխաւոր իրողութիւն մ'է , որմէ թէ՛ գիտնականապէս , և թէ՛ գործնականապէս ամէն օր օգուտ կը քաղուի : Կարելի չէ մարդուս վրայ փորձեր ընել , բայց անասնոց վրայ կարելի է : « Մարդկային բնախօսութիւնը » մեր գործարանաց պաշտօնները հասկնալու համար այս միջոցին դիմած է : Այս մասին բժշկականութիւնը աւելի գործ կը տեսնէ , վասն զի բժիշկները հիւանդ մը



գարմանելու ժամանակին , անասնոց վրայ  
ըրած փորձերնէն օգուտ կը քաղեն : « Մար-  
գարանութիւնն » ալ , ինչպէս որ պիտի աես-  
նենք հիմա , այս ստորին կարգի արարած-  
ներէն խիստ կարեւոր դասեր առած է :

Բայց մարդարանութիւնը աւելի կատար-  
եալ կերպով լոյս առնելու համար , պէտք է  
որ անասնոց կարգէն ալ հեռուն երթայ :  
Բուսականները անասուն չեն , ինչպէս որ  
անասուններն ալ մարդ չեն . բայց թէ՛ մար-  
դիկ , թէ՛ անասունք և թէ՛ բուսականք , ա-  
մէնքն ալ « գործարանաւոր և կենդանի է-  
ականեր են » : Ասոնք՝ գործարանաւոր և կեն-  
դանի ըլլալով , այս երկու յատկութիւնները  
չունեցող հանքայիններէն կ'որոշուին , իրենց  
(մարդոց , անասնոց և բուսոց) յատուկ եղող  
զանազան ընդհանուր հանգամանքներով :

Բոլոր գործարանաւոր էակները՝ սահմա-  
նաւոր տեղակայանութիւն մը ունին . ամէնքն  
ալ ծնած ատենին , փոքր և տկար են . ա-  
մէնքն ալ կը մեծնան և կը զօրանան իրենց  
կենաց մէկ մասին մէջ . յետոյ ուժերնին ,  
կենսականութիւննին , և երբեմն ալ հասակ-  
նին կը նուազին և վերջապէս ամէնքն ալ  
կը մեռնին : Բոլոր գործարանաւոր և կեն-  
դանի էակները սնանելու պէտք ունին ի-  
րենց կենացը մէջ : Չմեռած ամէնքն ալ ի-  
րար կարտադրեն կա՛մ հունտով մը կա՛մ



ձուռով մը, (հոս տեսակաց վրայ է խօսքերնիս  
և ոչ անհատից), և ասիկա ասանկ է նաև ա-  
նոնց համար, որոնք ուղղակի կերպով բող-  
բոջէ մը, աղուրիէ մը (տալորբում), պատ-  
ուհաստէ մը արտադրուած կ'երևին, վասն  
զի բողբոջէ բողբոջ, աղուրիէ աղուրի,  
պատուհաստէ 'ի պատուհաստ կրնանք մինչև  
հունտը և ձուն ելնել: Վերջապէս ամէն  
գործարանաւոր և կենդանի էակ հայր մը  
և մայր մը ունեցած է:

Ասկա ուրեմն, բոլոր կենդանի էակաց, և  
հետեւաբար մարդուս յատուկ եղող բոլոր  
այս փէնօմէնները (երևոյթ)՝ ենթադրել կու-  
տան այն ընդհանուր օրէնքները, որք կը կա-  
ռաւարեն զանոնք, և որք հետեւապէս նոյն  
ըլլալու են մարդուս համար ալ, ինչպէս որ  
են տունկին համար:

Գիտութիւնը՝ ամէն օր կը հաստատէ այս  
վերոյիշեալ եղբակացութիւնը, զոր լոկ տրա-  
մարանութեամբ կարելի էր «գտնել», իսկ  
այսօրուտն օրս նա (եղբակացութիւնը) «փոր-  
ձառութեան» արդիւնք մը կրնայ համար-  
ուիլ: Եւ չեմ կարծեր, որ այս արդիւնքին  
մէջ ի՛նչ սքանչելիք ըլլալը ձեզի հասկցնելու  
համար հարկ ըլլայ երկար խօսելու:

Ըստ իս, կը զարմանամ որ մարդը և ճը-  
ճիններուն յետինը, երկրիս թագաւորը և  
յետին մամուռը (եօտուն) այնպիսի կապերով

կցուած են իրարու հետ , որ բոլոր կենդանի արարածները բովանդակութիւն մը կը կազմեն , յորում ամէն բան կը ներդաշնակաւորի և իրար կը բռնէ :

Զանազան ֆէնօմէններու՝ ամենուն ալ հաւասարապէս յատուկ եղած ըլլալէն , և հաւասարապէս ամենուն ալ յատուկ եղող զանազան օրինաց տակ , ամենուն մէկէն գըտնուած ըլլալէն այնպիսի հետեւութիւն մը յառաջ կու գայ , որուն որչափ մեծ կարեւորութիւն ալ կարենամ տալ , տեղն է : Մարդուս վերաբերեալ խնդիրները ի՛նչ որ ըլլան , և քանի որ այս խնդիրները այս յատկութեանց մէկուն , այսինքն բոլոր գործարանուոր և կենդանի էակաց հաւասարապէս յատուկ եղող ֆէնօմէններէն մէկուն , կը վերաբերին , չէ՛ թէ միայն անասնոց սէտք է դիմել լոյս առնելու համար , այլ նաեւ բուսականաց , եթէ կ'ուզենք ճշմարտութեան հասնիլ :

Երբ որ այս խնդիրներէն մէկը կ'առաջարկուի , և անոր պատասխան կը տրուի , այս պատասխանը լաւ և ստոյգ ըլլալու համար , սէտք է որ այն (պատասխանը) մըտցունէ զմարդ բոլոր այն ընդհանուր օրինաց մէջ , որոնց հպատակեալ կը գտնուին միւս բոլոր գործարանաւոր և կենդանի էակները :

Եթէ տրուած լուծումը բացառութիւն մը կ'ընէ մարդուս՝ այս ընդհանուր օրինաց

մէջէն , այն ատեն կրնաք հաստատապէս  
լսել , որ այս լուծումը յուր և բոլորովին սը-  
խալ է :

Բայց երբ խնդիրը՝ այն կերպով կը լու-  
ծէք , որ մարդս այս մեծ և ընդհանուր օրի-  
նաց մէջ կը մտնէ , այն ատեն կրնաք վստահ  
լլալ , որ լուծումը լաւ , ճշմարիտ և իրա-  
կանապէս գիտնական (scientifique) է :

Աղացուցական այս եղանակներով միայն ,  
զոր հիմա համառօտեցի , կրնանք այժմ մար-  
դաբանութեան երկրորդ հարցումը ձեռք  
առնուլ :

Մարդկան բազմաթիւ տեսակներ կան ,  
ի՞նչ բազմաթիւ ցեղերէ բաղկացեալ մարդ-  
կային մէկ տեսակ կայ միայն :

Այս խնդիրը աղէկ հասկցուելու համար  
բացատրութեան կարօտ է :

Ղիտեցէք անգամ մը սա պատկերները ,  
զոր սրահիս մէջ կախել տուի : Ասոնք այն  
պատկերներն են , զորոնք տնկաբանական  
պարտեզին մէջ բրած դասախօսութեանցս  
մէջ կը գործածեմ :

Ասոնցմէ խիստ քիչ բան բերել տուի  
հոս , բայց ասոնք ալ բաւական են ձեզի  
դադափար մը տալու , այն գլխաւոր փոփո-  
խութեանց վրայ , զորս մարդկային տիպը կը  
ներկայացնէ . հոս տեսածներնիդ՝ աշխարհիս  
գրեթէ ամէն կողմերէն առնուած անհատ-



ներ են , և այս դիտողութիւնը մեծ կարեւորութիւն ունի : Ար տեսնէք որ ասոնք առաւելագոյն իրարմէ կը տարբերին գոյներովն , շատերը մազերովն , ումանք անգամներու համեմատութեամբ , ումանք ալ գիմաց դժաւորութիւններովն :

Հիմա սա գիտնալ պէտք է թէ , այն տարբերութիւնները , որոնք կ'երևին մարդկային խումբերու վրայ , որոնցմէ այս պատկերները օրինակուած են , «տեսակի» տարբերութիւններ են , թէ ասոնք (տարբերութիւնները) մի միայն մէկ տեսակի վերաբերող շատ մը «ցեղերու» գոյութիւնը ցոյց կու տան :

Ար տեսնէք որ այս խնդրոյն պատասխանելու համար նախ պէտք է յստակ դադափար մը ունենալ «տեսակ» և «ցեղ» բառերուն վրայ : Եւ իրօք բոլոր վիճաբանութիւնը այս երկու բառերուն վրայ է :

Ասոնք դժբաղդարար շատ անգամ իրարու տեղ ատնուած են , կամ թէ տղէկ սահմանուած չեն : Ասկէ այնպիսի վիճաբանութիւններ ծագած են , որոնք շուտ կը վերջանային , և թէ իրերը խիստ մօտէն քննել ուղուէր :

Տեսնենք թէ մենք կրնանք ասոնց (տեսակի և ցեղի) վրայ յստակ դադափար մը կազմել , առանց մտնելու այնպիսի մանրամասն պարագայից մէջ , որոնց չենք կրնար մերձենալ հոս :

Յիւսի ձեր մէջէն ո՛չ ոք կը շփոթէ էջը ձիւ մը հետ՝ մինչև անգամ երբ ձին փոքր ըլլայ . և այնչափ փոքրիկ ձիեր կան , որոնք թէ՛ս—Նէօլի (Նոր երկրի) շուներէն շատ մեծ չեն . մինչև անգամ երբ էջ մը հասարակ ձիու մը չափ մեծ ըլլայ , ինչպէս են օրինակի համար Բուաթուի մեր խոշոր էջերը : Ան միջապէս պիտի լսէք . — Ասոնք տարբեր տեսակներ են . — ահաւասիկ մեծ էջ մը և փոքրիկ ձի մը : Այսպէս պիտի լսէք նաև եթէ շուն մը և դայլ մը իրարու քով բերուին .

Ընդհակառակն ամէնքդ ալ՝ իրարմէ շատ պանազանող դաս մը անասունները «շուն» կանուանէք , զորօրինակ դամիւր (սամուռ, քէօրէյի) , բարակը (թաղը) , գանգրամազ շունը (barbet) , նոր երկրի շուներ և :

Սակայն, եթէ անգամ մը դիտելու ըլլանք այս շուներուն մէջ , թէ՛ հասակի , թէ՛ ան դամոց համեմատութեան , և թէ՛ գոյնի՝ այն պիտի տարբերութիւններ կը տեսնենք , որոնք ձին՝ էջէն որոշող տարբերութիւններէն աւելի մեծ են :

Մի և նոյն հասակն ունեցող էջ մը և ձի մը՝ շատ աւելի կը նմանին իրարու , քան թէ այն շուները զոր հիմա յիշեցի :

Ասկէց ՚ի զատ , եթէ սև գանգրամազ շուն մը և ձերմակ գանգրամազ շուն մը՝ իրարու քով դրուին , ասոնց համար զատ աւել



նուններ չէք բնառեր, այլ երկուքն ալ «պառպէ» (այս ցեղ շունին Գաղղիսիք պառպէ կ'ըսեն) կ'անուանէք թէ և մէկը սեւ և միւրը ձերմակ է :

Այսպէս կ'ընէք նաև բուսականաց համար ալ : Կարմիր վարդն ալ, ձերմակ վարդն ալ, ձեղի համար հաւասարապէս վարդ են : Սոյնպէս և փողոցները երկու հատը մէկ «սուխ» վաճառուող տանձը և Շըլէի քով երեք Ֆրանքի վաճառուող տանձը հաւասարապէս տանձ կ'անուանէք :

Ահաւասիկ, չգիտնալով, բնադէտներու պէս ճիշդ եզրակացութիւն մը բրած եղաք. անոնց պէս ճշգիւ բրածած եղաք տեսակի և ցեղի խնդիրս որ առաջին անգամ կրնայ չբաժնի երեւիլ այն խառնակութեան պատճառաւ, զոր ցուցուցի ձեզ հիմա. այս ալ օրինակ մ'է, որով կապացուցուի թէ շատ պարագայից մէջ թողովրդական գննութիւնը և առողջ դատողութիւնը գիտնականաց ջանիցքը պէս ուղիղ նպատակի մը կը հասնին :

Հիմա ձեր բրած դատմանցը նկատմամբ բրածներս սուելի ընդարձակելով՝ գիտնականապէս խօսինք, աղէկ գիտեմ որ այս դատմանց համեմատ խօսելով չափաւս սխալիմ :

Այս դատողմանը կը ցուցունեն, որ կենդանական կամ բուսական տեսակ մը՝ զանազան աստիճաններու մէջ կրնայ փոփոխու-



Թիւններ կրել : Շունը՝ ինչ որ ալ ըլլան իւր  
ընդհանուր ձևերը , հասակը , մազը , միշտ  
չուն է , տանձն ալ միշտ տանձ է , ինչ որ  
ալ ըլլայ իւր խոշորութիւնը , համը , դոյ-  
նը ևն :

Այս իրողութիւններէն , զոր ցոյց տուի , կը  
հետևի նաև որ այս փոփոխութիւնները սե-  
րընդական ճամբով կը հաղորդուին : Ամէնը  
նիդ ալ դիտէք , որ երկու դամիւռ ամուսնա-  
նալով՝ իրենց պէս դամիւռներ կը ծնանին :

Ա՛րքայապէս , աւելի ընդհանուր եղանա-  
կաւ մը , ասկէ կը հետևի որ մի և նոյն տե-  
սակէ եզոզ անհատները՝ բոլորովին կատար-  
եալ կերպով իրարու նմանելէ կրնան դադ-  
րիլ , և միանգամայն արտաքին խիստ տար-  
բեր յատկութիւններ ալ կրնան անուլ , ա-  
ռանց , այսու ամենայնիւ , մեկուսանալու և  
տարբեր տեսակներ կազմելու : Ինչպէս որ  
հիմա ըսինք , չունը՝ չուն կը մնայ իր ներկա-  
յացուցած փոփոխութիւններովն հանդերձ :

Ապա ուրեմն բնադիտաց «ցեղ» կոչած-  
ները , ճշդիւ այն խումբերն են , որոնք տե-  
սակին սկզբնական տիպէն հեռացող , և  
երկրորդական տարբեր խումբեր կազմող  
անհատներէ կազմուած են :

Գիտէ՞ք արդեօք , թէ ինչո՞ւ համար ամէն  
ժամանակ եզանց , ձիւրուն և՛ ցեղերու , վը-  
րայ կը խօսուի : Ասան դի մէկ է եզան որե-

աակն, զոր ընտանեցուցած ենք, և յորմէ (տե-  
սակէն) յառաջ եկած է ինչպէս Իսաիի վայ-  
րենադէմ խոշոր եզը, նոյնպէս Պարթեան  
ցեղը : Սոյնպէս և ձիու մէկ տեսակ ունինք,  
և այս տեսակէն յառաջ եկած է այն փոքրիկ  
ձին, որուն վրայ քիչ մը յառաջ խօսեցայ  
ձեզ, և Լօնտուայի փողոցներուն մէջ դարե-  
ջուր կրող այն խոշոր ձիերը, վերջապէս ոչ-  
խարի, այծի և, զանազան ցեղերը մի մի-  
այն մէկ տեսակի կը վերաբերին :

Պէտք է որ դադարաբաց այս բովանդա-  
կութիւնը աւելի ճշդեմ դայն չթողած, վասն  
զի խիստ փոքր անորոշութենէ մը անդամ  
չատ մեծ անտեղութիւններ կրնան ծագիլ :  
Բուսականներէ և անասուններէ առնուած մէկ  
քանի օրինակներ ևս մէջ պիտի բերեմ, և  
այնպիսի տեսակներ պիտի ընտրեմ, որ առա-  
ջիններու չափ ընտանի ըլլան ձեզ :

Ամենքնուդ ալ դիտցած բանն է խաչ-  
ուէն, հիմա, թողութիւն ըրէք ինձ, որ ա-  
նոր պատմութիւնը ընեմ ձեզ, և պիտի տես-  
նէք թէ որ'չափ հրահանգիչ է ան :

Խաչուէին ծագումը Ափրիկէի մէջէն է,  
և անծանօթ ժամանակներէ հետէ այս տուն-  
կը Նթովպիոյ՝ կարմիր ծովուն կողմի եր-  
կիրներուն մէջ մշակուեցաւ, և երբորդ  
դարուն ժամանակները, այսինքն ասկէ չորս  
հարիւր տարի առաջ, խաչուէն կարմիր ծո-



վէն անցաւ և Արարիա մտաւ, ուր այն ժա-  
մանակէն 'ի վեր կը մշակուի, և հոնկէ է որ  
Մէքքէի հռչակաւոր խահուէն կու գայ:

Խահուէի գործածութիւնը շատ կանուի  
և խիստ արագութեամբ տարածուեցաւ բո-  
լոր Արևելից մէջ, և շատ ուշ մտաւ Եւրո-  
պայի մէջ: Գաղղիոյ մէջ առաջին անգամ  
'ի Մարսիլիա խահուէ խմուեցաւ:

Փարիզի մէջ առաջին խահուէն 1667 ին  
խմուեցաւ, և զայն, որ քիչ մը բան էր,  
բերողն ալ՝ Թէմիս անուն Գաղղիացի ճանա-  
պարհորդ մ'էր: Անկէ երկու տարի ետքը,  
1669 ին, Լուդովիկոս ԺԳ ի քով, Բ.  
Դրան զեսպան Աիւլէյման Աղան ճաշակե-  
ցուց անկէ թագաւորին պալատականացը, ու  
րոնց շատ համով եկաւ. բայց և այնպէս  
խահուէի գործածութիւնը ասով ալ չտու-  
րածուեցաւ Գաղղիոյ մէջ, և ՅՂ երորդ դա-  
րուն մէջ է, որ անոր գործածութիւնը իրօք  
ընդհանրացաւ:

Ար տեսնէք, որ երկար ժամանակէ 'ի վեր  
չէ, որ խահուէն չըջաբերութեան մէջ է:  
Ստոյգը խօսելով, հազիւ մէկ ու կէս դար  
կայ, որ անիկա բոլոր Եւրոպայի մէջ գոր-  
ծածուիլ սկսաւ: Շատ տարիներ շարունակ  
այս սպառելոյն համար, Եւրոպա հարկատու  
մնաց Արարիոյ, Եւրոպայի մէջ սպառուած  
բոլոր խահուէն՝ Արարիայէն և մասնաւորա-



պէս Մէքքէյէն կու գար : ԺԸ բորդ դարուն  
սկիզբները , Հոլանտայիք զայն Պաթաւիա  
մոցներու մորձեցին որ իրենց Հնդկատանի  
գաղթականութեանց մէկն է . հոն աղէկ յա-  
ջողեցաւ նա . Պաթաւիան ալ մէկ քանի  
տունկ Հոլանտա ղրկուեցաւ , ուր ջերոցի  
(serre chaude) մէջ դրուելով հոն ալ աղէկ  
յաջողեցաւ : Այս տունկերէն մէկը 1710 ին  
տունները , Գաղղիա բերուեցաւ , և տնկա-  
րանական պարտեզին ջերոցներուն մէջ դըր-  
ուեցաւ . ուր դարձեալ յաջողեցաւ և շատա-  
ւիզներ արձակեց :

Դէպ 'ի 1720 կամ 1725 ի ժամանակնե-  
րը , ճիշդ թուականը չկրցայ գտնել , Գաղ-  
ղիացի ծովային սլաշտօնակալ մը , Տէքլիէօ  
նաւապետը , մտածեց որ , ըստ որում Հոլան-  
տա մշակեր էր խահուէն Պաթաւիոյ մէջ ,  
ինքն ալ կրնար Մէքքիկոյի ծոցին մէջ  
գանուող մեր գաղթականութեանց մէջ յա-  
ռաջ բերել զայն : Ուստի Մարթինիկ եր-  
թալու համար ճամբայ ելած ժամանակ՝  
տնկարանական պարտեզէն երեք հատ խահ-  
ուէի տունկ առաւ և հետը տարաւ : Հակա-  
ռակ հովերուն պատճառաւ ճամբան շատ  
երկայն և դժուար եղաւ : Նաւուն մէջի  
ջուրը քիչ ըլլալով՝ հարկ եղաւ նաւուն մէջ  
գանուողներուն չափով ջուր տալ : Միւսնե-  
րուն պէս , Տէքլիէօ նաւապետին ալ խմելու

ջուրին օրական բաժինը խաա քիչ բան էր, բայց և այնպէս տուններուն ալ բաժին կը հանէր անկէ : Բոլոր այս խնամոց հակառակ, երկու հատը չորցաւ, և մէկ հատը միայն ողջ առողջ Մարթինիկ հասաւ :

Հոն տնկուելուն պէս անանկ յաջողեցաւ որ այսօր բոլոր Անթիլեան կողեաց և Հաբաւային Ամերիկայի մէջ յառաջ եկող խահուէն՝ Մարթինիկի այն մէկ տունկէն իջած է : Երեսուն տարի ետքը մեր արեւմտեան գաղթականութեանց դուրս հանած խահուէին քանակութիւնը միլիոնաւոր լիտրներու կ'եղնէր :

Կը տեսնէք, որ խահուէն Ամերիկէն ելնելով, արեւելեան կողմէն մինչև Ասիոյ ծայրը հասաւ, և արեւմտեան կողմէն ալ մինչև Ամերիկա, հետեւարար գրեթէ բոլոր աշխարհ պտտեցաւ : Այս երկար ճանապարհորդութեան մէջ խահուէն փոփոխութիւններ կրեց :

Թողունք խահուէին ծառը, զոր շատ չենք ճանաչեր, և միայն հատերը դիտենք. ասոնց որպիսութիւնը, և ո՛ր երկիրներէն եկած ըլլալին որոշելու համար, նպարտաւաճառ ըլլալու հարկ չկայ : Մարդ չի շփոթեր Մէքքէյինը՝ Պուռպօնի խահուէին հետ : Ռիօ—Ճանէյոսինը՝ Մարթինիկին հետ, իւրաքանչիւր հատ՝ իւր ձևին, խոշորութեա-

ներ կամ մանրութեանը և համին մէջ կը կրէ իւր ծնունդը :

Արի՛ց՝ յառաջ կու գան արդեօք այս փոփոխութիւնները : Ստուգիւ մենք չենք կրնար բացատրել, ո՛չ ինչու համարը , և ո՛չ ինչու պէսը , և ոչ ալ սլատճառներուն և գործերուն կապակցութիւնը աղէկ մը կրնանք զննել : Սակայն ֆէնօմէններուն բովանդակութիւնը գիտելով , յայտնի՞ կերեւի , որ բոլոր այս փոփոխութիւնները բարեխառնութեան , կլիմայի , մշակութեան և, տարբերութիւններէն յառաջ կու գան :

Այս օրինակը բուսականներէ առինք , յորմէ կը տեսնուի որ մի և նոյն բոյսը զանազան տեղեր տարուելով , և զանազան կերպերով մշակուելով , կրնայ «տարբեր ցեղեր» յառաջ բերել : Թէյը մէկ քանի տարիէ ՚ի վեր է , որ հարաւային Ամերիկա տարուելով , նմանօրինակ իրողութիւններ կը ներկայացընէ մեզ :

Հիմա անասնոց մէջէն ալ օրինակ մը առնենք : Հնդկահաւը ամենքնուդ ալ ծանօթ է , բայց անոր Ամերիկայէն մեզի եկած բլլալը՝ կարելի է որ մէջերնիդ չգիտնցողներ գտնուին , անոր Եւրոպա մտնալը բաւական ծոր բան է :

Ամերիկայի մէջ հնդկահաւը վայրենի է , և հոն իւր բնութեան համեմատ բոլորովին



ազատ գոյութիւն մը ունենալով՝ այնպիսի յատկութիւններ կը տեսնուին վրան, որոնցմով նա մեր ընտանի հնդկահաւներէն կը տարբերի :

Վայրի հնդկահաւը շատ գեղեցիկ թռչուն մ'է . գոյնը խիստ թուխ և ծիածանանքման, լի՝ կապուտակագոյն, սղնձագոյն և ոսկեգոյն անդրադարձութիւններով, որոնցմով իրօք զարդի թռչուն մը եղած է, և իւր այս գեղեցիկ փետուրներուն պատճառաւ է որ Գաղղիա բերուեցաւ : 'Ի սկզբան մէկուն մտքէն չէր անցներ զայն ուտել . բայց 1370 ին է որ, այսինքն ասկէ 297 տարի առաջ, առաջին անգամ Կարոլոս Թի հարսնիքին, սեղանի վրայ դրուեցաւ ուտելու համար :

Երբ այս թռչունին համն առնուեցաւ, տեսնուեցաւ որ զայն լոկ դիտելով սէտք չէր բաւականանալ : Հետեւաբար գարաստանէն (parc) իր հաւնոցը մտաւ, հաւնոցէն ալ ազարակ, յետոյ մէկ ազարակէն միւս ազարակը, արեւելքէն արեւմուտք, և հիւսիսէն հարաւ ճանապարհորդեց : Այսօր, դըրեթէ բոլոր Գաղղիոյ մէջ հնդկահաւ կը պահեն, որն որ մեծկակ առուտուրի մը նիւթ եղած է :

Բայց ազարակէ ազարակ մեր բոլոր երկրին մէջ ճանապարհորդութիւն ընելով, այս

Թռչունը՝ ապրելու զանազան աղանակներու , տարբեր սնունդներու , տարբեր օդերու հանօդիակեցաւ , և երբէք չսպառազեցաւ այն նախնական կենաց պայմաններու , զոր այս տեսակը բնականապէս ունէր Ամերիկայի մէջ : Ասկէ սա յառաջ եկաւ , որ ինքն ալ փոխուեցաւ , և այսօր Գաղղիայի հնդկահաւը չի նմանիր վայրի հնդկահաւին , յորմէ սերած է նա : Բնդհանրապէս սղտիկեցաւ , այն որ իւր թուխ գոյնը սրահեց աւելի սւեցաւ , բայց կան նաեւ անանիւներ ալ , որոնք խարտեաչ են , ոմանք քիչ շատ սպիտակ , այլք վրանին սպիտակ , մոխրագոյն , եւ բիծեր ունին :

Վերջապէս ուրտեղ որ հնդկահաւ կը հասցենն , հոն տեղէն մէկ նոր փոփոխութիւն մը յառաջ կու գայ , որով «ցեղեր» կը գոյանան :

Հիմա , մեր Գաղղիոյ հնդկահաւները՝ Ամերիկայի իրենց նախնի ծնողացը և մինչև անգամ իրարու ալ չնմանելու չափ փոխուած ըլլալուն համար , միթէ Ամերիկայի վայրի հնդկահաւներուն թոռները չե՞ն համարուիր . միթէ նոյն տեսակին վերաբերեւէ դադրած են այլ ևս . ո՛չ բնաւ :

Ինչ որ քսի ձեղի հնդկահաւին համար , նոյնը կրնամ քսել ճագարին համար ալ (անոնա թափանք) : Վայրի ճագարը՝ բոլորեփքնիս անտառներու մէջ կ'ապրի , և մեր

ընտանի ճագարներէն շատերուն չինմանիք  
կամ քիչ կրնանի : Այս վերջիններուն մէջ  
կան որ մեծ են , կան որ փոքր են , լեր-  
կը կայ , փափկամազը կայ , ոմանք ճեր-  
մակ են , ոմանք սև , այլք դեղին և մախ-  
րազոյն , սխտակաւոր և միազոյն են . մէկ  
խօսքով , այս տեսակը բազմաթիւ տարրեր  
ցեղեր կը պարունակէ իւր մէջը , որոնց ամէն-  
քնն ալ մեղի խիստ մօտ սպորոզ փայրի ճա-  
գարին հետ մի միայն մէկ տեսակ մը կը  
կազմեն :

Այս իրողութիւններէն , որոնց պէս շա-  
տերը կրնամ մէջ բերել , կարեւոր հետեւու-  
թիւն մը պիտի հանենք , որուն վրայ ձեր բո-  
լոր ուշադրութիւնը կը հրաւիրեմ :

Զոյգ մը ժագարներ , եթէ այնպիսի դաշ-  
տի մը մէջ ձգուելու ըլլան , ուր ամենեւին  
թշնամույ չհանդիպին , մէկ քանի տարիէն  
իրենց սերնդովը զայն կրնան լեցնել , և ան-  
կէ ալ մէկ քանի տարուան մէջ , բոլոր դաշ-  
տին կրնայ դիւրութեամբ լեցուիլ : Ասկէց  
ի զատ տեսանք հիմայ , որ Տիւքլո նաւապե-  
տին տարած խահուէի մէկ հատիկ տունկէն  
միայն յառաջ եկան Ամերիկայի մէջ գտնուող  
այսօրուան բոլոր խահուէի ծառերը :

Վայրի հնդկահաւները և իրենց ընտանի  
զաւկները , վայրի ժագարները և իրենց ի  
գերութիւն վարեալ սերունդը , բնագետնե-



բու կողմանէ կրնան սկզբնական զուգէ մը յառաջ եկած համարուիլ :

Պարօնայք , այս է տեսակին դրոշմը : Այն ամէն անգամին , որ կենդանական կամ բուսական անհատներու կամ խումբերու առաւել կամ նուազ բազմութիւն մը տեսնելով , կրնանք , այս ինչ կամ այն ինչ պատճառներով , զանոնք նախնական մէկ զուգէ մը միայն եղած համարիլ , պիտի ըսենք որ տեսածնիս «տեսակ» մ'է . և եթէ մէկ խումբէն միւս խումբը տարբերութիւններ կան , պիտի ըսենք որ այս խումբերը «այս տեսակին» ցեղերն են :

Աղէկ նկատեցէք , Պարօնայք , որ այս բացատրութեամբս , ճաղարաց և հնդկահաւուց սերնդեան արմատը (souche) եղող նախնական զուգին գոյութիւնը իրրեւ ստոյգ չվճռեցի . ասոր վրայ չեմ պնդեր վասն զի ոչ փորձառութիւնը , ոչ դիտողութիւնը , որոնք գիտութեան մէջ մեր երկու առաջնորդներն են , այս մասին բան մը չեն կրնար սովորեցնել մեզ : Միայն սա կ'ըսեմ ձեզի , որ ամէն բան անանկ կը ցուցնէ , որպէս թէ սկզբնական մէկ զոյգ մը միայն կար :

Հիմայ կը տեսնէք որ «տեսակի» և «ցեղի» խնդիրը շատ դժուարաւ հասկնալի բան մը չէ , և ոչ ալ դժուարաւ լուծելի , երբ վայսբենական նախատիպը կը ճանչնանք , երբ

ձեռքերնիս այնպիսի սլառամական փորձեր  
ունինք, որոնցմով կրնանք այս նախատպին  
հետ կապել այն իրարմէ քիչ կամ շատ տար-  
րեր խումբերը, որոնք ընտանենուցելու  
համար, անկէ բաժնուած են: Բայց երբ  
վայրենական նախատիպը շենք ճանչնար, երբ  
չունինք սլառամական ապացոյցներ, խնդիրը  
ի սղբան շատ կը դժուարանայ, վասն զի  
անհատէ անհատ, խումբէ խումբ, տեսած  
տարբերութիւններնիս կրնան իրրեւ տեսակ-  
ներու տարբերութիւններ նկատուիլ:

Այն ատեն երջանկաբար բնախօսութիւ-  
նը (physiologie), օգնութեան կը հաս-  
նի մեզ: Հոս դիմացնիս կ'եննէ այն մեծ և  
սքանչելի ընդհանրական օրէնքներէն մէկը,  
որոնցմով կանգուն կը կենայ բնական կար-  
գադրութիւնը և որոնց որչափ վերահասու  
լլանք, այնչափ աւելի կ'սքանչանանք անոնց  
վրայ: Ասիկա խառնադուզութեան (croise-  
ment) օրէնքն է, օրէնք մը, որուն թէ  
անասունք և թէ բուսականք ենթակայ լը-  
լալով, մարդուս ալ կը սլառաճի:

Գիտէ՞ք թէ ինչ կը նշանակէ խառնա-  
դուզութիւն բառը. ասիկա այն ամուսնու-  
նութիւնն է, որ թէ երկու տարբեր տե-  
սակներէ եղող, և թէ երկու տարբեր ցեղե-  
րէ եղող անասնոց մէջ կը կատարուի:

Հիմա, այս ամուսնութեանց արդիւնք-

ները սա հետեւեալ օրինաց ներքեւ կը գրու-  
նուին :

Երդ «տարբեր տեսակներէ» եղող եր-  
կու անասուններ իրարու հետ ամուսնացուց-  
ուին , այս փորձերուն ամենամեծագոյն մա-  
սին մէջ ամուսնութիւնը «անպտուղ» կը  
մնայ : Զորօրինակ հազարաւոր անգամներ  
և բոլոր աշխարհի մէջ , նապաստակները  
(թափչան) ճաղարներու (տոտա թափչանը)  
հետ ամուսնացնելու փորձ եղաւ , բայց ան-  
պտուղ : Կ'սուի թէ , երկու անգամ յաջողոյ  
եղած է , բայց այս երկու դէպքերը խիստ  
չատ . տարակուսելի են , վասն զի դեռ ասկէ  
քիչ մը առեն յառաջ խիստ տաղանդաւոր և  
փորձառականութեան արհեստին մէջ չատ  
վարպետ անձ մը , որ այսպիսի ամուսնու-  
թեանց կարելիութեանը կը հաւատար , իւր  
բոլոր ջանիցը մէջ ապարտին ելաւ : Թէ և  
այս անձը այս բանը յաջողցնելու համար  
խիստ լաւ պայմաններ ունէր , այսու ամե-  
նայնիւ իրմէ առաջ այսպիսի փորձեր ընող  
Պիւֆօնի և երկու Ժօֆուա—Սէնթ—Իլէա-  
ներու պէս ընդունայն վաստակեցաւ :

Ահա այսպէս նապաստակը և ճաղարը  
թէպէտ առ երեւոյթս իրարու շատ յարմա-  
րաւորութիւն մը կը ցուցնեն , սակայն իմի-  
տին բան մը չեն կրնար արտադրել :

Այս է ահա երկու «տարբեր տեսակնե-



բու խառնագողգոթեան ընդհանուր արդիւնքը :

Խիստ ստիպւել է պէտքերու մէջ, երկու տարբեր տեսակէ եղող անհատներու ամուսնութիւնը արդիւնաւոր է, բայց որդին և թոռը չեն կրնար արտադրել : Իբր օրինակ էշին և ծիւռն մէջ եղած ամուսնութիւնը մէջ պիտի բերեմ :

Այս ամուսնութեան արդիւնքը ջորին է : Աշխարհիս բոլոր ջորիները՝ էշու մը և զամբիկի (զըսրադ) մը որդիքն են : Այս կենդանիները խիստ բազմաթիւ են . Սպանիոյ և Հարաւային Ամերիկայի մէջ, զանոնք ձիերէն շատ նախասպառիւ կը համարին . վասն զի իրենց ուժեղութեանը և դիմացկունութեանը պատճառաւ աշխատանքի աղէկ կու գան : Պառտօն (bardot) որ շատ ուժեղ չըլլալուն համար չի բնորոշիր, առջինին հակառակ խառնագողգոթեան արդիւնք է, այսինքն ձիէ մը և մատակ էշէ մը յառաջ եկած ջորի մ'է : Պառտօններն ալ ջորիներուն պէս չեն կրնար ծնունդ տալ իրարու : Եթէ մէկը ջորի մը կամ պառտօ մը ունենալ ուզէ, ան պատճառ պէտք է որ երկու տեսակներուն դիմէ :

Արջապէս չափազանցաբար հազուադէպ եղող բացառութիւններէ կը տեսնուի, որ ասոնց որդւոցը մէջ ծննդականութիւն

կը մնայ, բայց շատ նուազ է • իսկ թողանց  
մէջ՝ այս ծննդականութիւնը աւելի կը նուա-  
զի, և երրորդ, չորրորդ, կամ առ առաւելն,  
հինգերորդ սերունդին մէջ, բոլորովին կը  
վերջանայ : Այսպէս կ'ըլլայ նա և, եթէ  
դեղձանիկը (գանարիա) և եկքանիկը (սազա  
դուշու) ամուսնացուցուին իրարու հետ :

Թէպէտ և կրնայի այսպիսի պարագաներ  
ունեցող խելմը օրինակներ մէջ բերել,  
բայց ասոնց ամենէն աւելին, այն մեծ և  
ընդհանրական իրողութիւնն է, որուն տակ  
կը պարունակին օրինակ ըլլալիք բոլոր միւս  
իրողութիւնները, և որ օրէնք մը ցոյց կուտայ  
մեզ : Ահաւասիկ այս իրողութիւնը • մինչև  
իսկ հազարաւոր տարիներու վրայ յառաջ  
տարուած, և հայրիւրաւոր տեսակներու վրայ  
եղած դիտողութեանց հակառակ, մինչև  
ցարդ միջնական տեսակի և ոչ մէկ օրինակ  
մը չունինք, որ այս օրինակը երկու տար-  
բեր տեսակներու վերաբերող անասնոց խառ-  
նազուգոթեամբը ձեռք բերուած ըլլայ :

Այս ընդհանուր իրողութեամբ կը բա-  
ցատրուի, թէ կարգաւորութիւնը՝ ինչպէս  
հաստատ կը մնայ ներկայ կենդանի արարա-  
ծոց մէջ : Եթէ այսպէս չըլլար, այն ատեն  
անասնական և բուսական աշխարհը՝ պիտի  
լքուէր այս միջնական խումբերով, որոնք  
խիստ անզգալի տարբերութիւններով մէկ



խումբէն միւսը պիտի անցնէին, և այս խումբնակութեան մէջ բնագիտաց անկարելի պիտի ըլլար բան մը հասկնալ :

Վերջապէս բոլոր այս ըսածներէս սահմանափակութեան եզրակացութիւնը կենէ, թէ ամբողջութիւնը (գըսըրըգ՝) տարրեր տեսակէ անասնոց ամուսնութեանց օրէնքն է :

Ընդհակառակն, երբ մի և նոյն տեսակէ եզրոյ և միայն տարրեր ցեղերէ եզրոյ անհատներ իրարու հետ կամուսնացուցուին, այն ատեն գործը ուրիշ կերպ կըլլայ, այսինքն բոլորովին հակառակը տեղի կունենայ :

Այս կերպ ամուսնութիւնները՝ միշտ արգիւնաւոր կըլլան, և միանգամայն միեւնոյն ցեղէ եզրոյ երկու անասնոց ամուսնութենէն ալ աւելի արգիւնաւոր կըլլան : Եւ մանաւանդ որդիներն և թոռները հայրերուն և մեծ հայրերուն չափ ծննդականութիւն կունենան, անանկ սր անսահման կերպով կը բողմանան : Ուստի դժուարութիւնը՝ չէ թէ ցեղերու խառնադուգութենէ յառաջ եկած խառնածին ցեղեր ունենալուն վրայ է, այլ ընտիր ցեղեր ունենալէն ետեւ, զանոնք անարատ պահել ուղելով թող չտալուն վրայ է, որ օտար արիւն մը դայ և զանոնք աւրէ :

Միեւնոյն տեսակէ, բայց տարրեր ցեղերէ եզրոյ անասնոց ամուսնութենէն յառաջ եկած ցեղեր բոլորովին կը վատան, ինչ-



պէս են մեր փողոցի շուները ։ տանիքի կա-  
տունները ։ հասարակ կառք քաշող ձիերը ։  
բոլոր այն անասունները, որոնց ինչ ցեղէ  
ըլլալինն անորոշելի է ։ վասն զի ամէն կերպ  
խառնադուգութեամբ անջատողական յատ-  
կութիւններնին շփոթուած են ։

Չէ թէ միայն դժուար չէ խառնածին ցե-  
ղեր ձեռք բերելը ։ այլ անոնք՝ որ արջառ,  
ձի կը պահեն ։ անոնք որ շուն ։ աղաւնի պա-  
հելու հոգ ունին ։ աղէկ գիտեն թէ իրենց  
սիրած ցեղին անարատութիւնը պահելու  
համար, ինչ զգուշութեամբ հսկել պէտք է ։

Ահա այս ընդհանրական իրողութենէն  
կը հետեւի որ ծննդականութիւնը տարբեր  
ցեղերու վերաբերող անասնոց մէջ եղած  
ամուսնութեանց օրէնքն է ։

Հոս է ահա ։ պարսնոյք, տեսակին և  
ցեղին մէջ եղող այն մեծ և հիմնական  
տարբերութիւնը ։ զոր խիստ կարեւոր է ճա-  
նաչել և օգուտ քաղել անկէ ։

Նրա կը տեսնենք իրարմէ տարբերող եր-  
կու բոյսեր կամ երկու անասուններ, և չեն  
գիտեր թէ ասոնք երկու տարբեր տեսակ  
ներքեն, չէ նէ միևնոյն տեսակէ եղող երկու  
ցեղեր ։ ասիկա հասկնալու համար ամուս-  
նացնենք զանոնք ։ եթէ զուգաւորութիւն  
անմիջապէս արդիւնաւոր ըլլայ, և այս ար-  
դիւնաւորութիւնը իրենցմէ եղած սերուն-

Պին մէջ ալ հաստատ մնայ, ուրիշ է որ վրաստահութեամբ ըսենք թէ այս բոյսերը, կամ այս կենդանիները՝ որչափ որ իրարմէ կը տարբերին ալ նէ, միևնոյն տեսակի ցեղերն են: Իսկ ընդհակառակն երբ առաջին զուգաւորութենէն կը տեսնենք, որ ամենևին արդիւնաւորութիւն, ծննդակոնութիւն չկայ, կամ կայ ալ նէ՝ նշանաւոր կերպով պահպելովրայ է, երբ կը տեսնենք որ նա հետզհետէ նուազելով, մէկ քանի սերունդէն ետեւ բոլորովին պիտի անհետանայ, առանց վարանելու կրնանք պնդել որ այս բուսականները կամ այս անասունները զատ զատ տեսակներու կը վերաբերին:

Պարոնայք, բաւական երկար խօսեցայ ձեզի բուսականաց, անասնոց, խահուէի, ճագարի, շան, կատուի, եզան և այլոց վրայ, և գուցէ կնործէք թէ մարդը մոռցայ, ընդհակառակն, միտքս միշտ այն էր:

Ո՞րն է այն խնդիրը, զոր անոր, մարդուն նկատմամբ պիտի լուծենք:

Ահաւասիկ:

Անգամ մ'ալ դիտեցէք զայն օրատկերները: — Ասոնք մարդկային խումբերուն մէջ բաւական նշմարելի բայց ոչ շատ մեծ տարբերութիւններ ցոյց կուտան ձեզ, որոնք թէպէտ առջի բերան մեծ կերելին:

Հիմայ այս զանազան խումբերուն նախա-



նական տիպը կամ տիպարը չենք ճանաչեր :

Եթէ այս տիպերուն յատկութիւնները ներկայացնող մէկ կամ բազում մարդոց պատահէինք նէ ալ, այս մասին պատմական վաւերագրեր (document) չունենալնուս համար, զանոնք չպիտի կրնայինք ճանաչել: Հետեւաբար, եթէ միայն այս տիպերը դիտելով, և մարդուս վրայ միայն մտածելով զատելու որ ըլլանք, չենք կրնար որոշել, թէ զանազան ժողովրդոց ներկայացուցած տարբերութիւնները՝ ցեղի՞ տարբերութիւններ են, թէ տեսակի տարբերութիւններ: Կամ թէ մարդս մէ՞կ սկզբնական ծագում (souche) մը ունեցած է, թէ բազմաթիւ :

Բայց արդէն ըսինք և դարձեալ կը կրկնենք, մարդս գործարանաւոր և կենդանի էակ մ'է, և այս տիտղոսով ենթակայ է նա՝ բոլոր գործարանաւոր և կենդանի էակաց վրայ իշխող ընդհանուր օրինաց, հետեւաբար խառնազուգութեան օրէնքին ալ ենթակայ է մարդս: Այս օրէնքէն պիտի հասկնանք թէ մարդկային մէ՞կ թէ բազմաթիւ տեսակներ կան :

Օրինակի համար իրարմէ ամենէն աւելի տարբեր երկու տիպերը (մարդկային) առնենք, այսինքն ճերմակը և սևամորթ մարդը :

Եթէ այս տիպերը իրօք զատ տեսակներ կը կազմեն, այս տեսակներուն մէջ եղած



մերձաւորութիւնը՝ պէտք է ունենայ այն հետեւութիւնը, զոր տարրեր տեսակներէ եղող անասնոց և բուսականաց զուգաւորութիւնը կ'ունենայ . այսինքն , այս մերձաւորութիւնը դիպաց ամենամեծադոյն մասին մէջ անծնունդ , կամ բոլոր դիպաց (դէպ մերձաւորութեան) մէջ շատ քիչ ծննդական ըլլալու է . ծննդականութիւնը քիչ ժամանակի մէջ անհետանալու է , և կարելի ըլլալու չէ ճերմակին և սեւամորթին մէջ միջնական խումբեր կազմուիլ : Եթէ այս երկու մարդերը՝ մի և եթ տեսակի մը ցեղերն են , մերձաւորութիւններնին կարի դիւրին կերպով ծննդական ըլլալու են . ծննդականութիւնը իրենց սերունդին մէջ ալ ըլլալու է , և միջնական ցեղեր կազմուելու են :

Հիմայ , պարոնայք , իրողութիւնները այս մասին վճռողական են , և վարանում չեն վերցներ : Երեք դար կայ որ ազնուագոյն ճերմակը , այսինքն Եւրոպացին , սանկ ըսենք , բոլոր աշխարհի տիրեց , ամեն տեղ դնաց նա , և ամենուրէք տեղական ցեղեր դտաւ , այսինքն իրեն չնմանող մարդկային խումբեր , ամենուրէք մերձաւորեցաւ անոնց հետ . մերձաւորութիւնները բնիկներուն մէջ տեղի ունեցածներէն աւելի ծննդական եղան :

Ասկէց ալ աւելին կայ , բարերադրարար

Պաղղկոյ երկիրը երբէք չպղծող վատթար սովորութեամբ մը, այսինքն գերեվարութեամբ, ճերմակ մարդը ամեն տեղ տարաւ սեւամորթը, և ամենուրէք խառնածին ժողովուրդների, ձեւացան ճերմակին՝ իւր գերիներուն հետ մերձաւորութեամբը: Նաեւ ամենուրէք սեւամորթը տեղական խումբերու հետ մերձաւորեցաւ, և ասկէց ալ միջնական ցեղեր յառաջ եկան, որոնց վրայ այս կրկին ծագման նշանները կերելին. վերջապէս ճերմակը ամեն ծագումէ եղող իւր խառնածիններուն հետ մերձաւորեցաւ, և ասկէց ալ երկրագունտիս զանազան տեղերը, և գլխաւորաբար հարաւային Սմերիկայի մէջ, իրարու խառնուած ժողովուրդներու այնպիսի չստկուելու խառնափնդութիւն մը յառաջ եկաւ, որոնք (ժողովուրդները) այս նկատմամբ մեր փողոցի շուներուն և տանեաց կատուներուն հետ կրնան կատարելապէս բաղդատուիլ:

Այն արագութիւնը՝ որով այս խառնածին ցեղերը կ'աճին և կը բազմանան, ստուգիւ նշանակութեան արժանի բան է: Երեք դարէ, այսինքն շուրջ տասնութիւտ սերունդէ 'ի վեր է, որ Եւրոպացիք աշխարհիս բոլոր միւս մասերուն մէջ ցրուեցան, և ճերմակին բնիկ ժողովրդեանց հետ մերձաւորելէն յառաջ եկած խառնուածներուն թիւը



բոլոր աշխարհի բնակչաց թուոյն մէկ եօ՞  
թանասներորդը կը հաշուի արդէն :

Հարաւային Ամերիկայի այն զանազան  
վիճակաց մէջ, ուր խառնուրդը կանուխ ըս-  
կած է, ուր Եւրոպացին Ամերիկայի գրեթե  
նուեւոն անաջին օրերէն դացած է, բնակ-  
չաց մէկ չորրորդը խառնածիններէն կը  
բաղկանայ, և զանազան նահանգներուն  
մէջ ալ կիսուակէս է :

Հիմայ կը տեսնէք, որ փորձառութիւնը  
կարելի եղածին չափ կատարեալ է այսօր :  
Եթէ չենք ուզեր ժխտել այժմեան բոլոր  
գիտութիւնները, եթէ չենք ուզեր որ բո-  
լոր գործարանաւոր և կենդանի էակաց մէջ  
մարդս միակ բացառութիւն մը ըլլայ, պէտք  
է որ ընդունինք, թէ բոլոր մարդիկ տարբեր  
ցեղերէ բաղկացեալ մէկ տեսակ մը միայն  
կը կազմեն. և հետեւաբար պէտք է որ ըն-  
դունինք, թէ բոլոր մարդիկ սկզբնական մէկ  
ամոլէ մը միայն ելած կրնան համարուիլ :

Արդ՝ Պարոնայք, կը տեսնէք որ այս եզ-  
րակացութեան եկանք, արտաքոյ որ եւ է  
վարդապետական կամ աստուածաբանական  
նկատողութեան, արտաքոյ որ եւ է փիլի-  
սոփայական կամ բնազանցական նկատողու-  
թեան : Այնդանեաց և բուսականաց վրայ  
իշխող օրէնքները գիտողութեան և փորձա-  
ռութեան առնելով միայն, այսինքն գիտու-



թեան միջոցաւ միայն է, որ տրամաբանական եղանակաւ սա եզրակացութեան հասանք, թէ Մարդկային մէկ տեսակ միայն կայ :

Ար համարձակիմ ըսել, որ այս հետեւութիւնը՝ խիստ մեծ կարեւորութիւն մը ունի, վասնզի այս հետեւութիւնը հիմ կըլլայ տիեզերական եղբայրութեան գաղափարին, հիմ մը՝ որուն շատ անձինք խելամուտ են այսօր, և որ գիտութեան և տրամաբանութեան վրայ հաստատուած է :

Պարոնայք, կը յուսամ որ իմ ապացոյցներովս համոզուեցաք : Սակայն գիտեմ և անտարակոյս դուք ալ գիտէք, որ բոլոր մարդաբանք համակարծիք չեն : Ընկերակցացս մէջ կան այնպիսի անձինք, որոնք տաղանդաւոր ալ ըլլալով՝ մարդկային տեսակաց բազմութեանը կը հաւատան :

Արեւի է որ օր մը այս մարդոց պատահիք. այն ժամանակ ուշադրութեամբ ունկընդիր եղէք, և տեսէք թէ իրենց կարծիքը հաստատելու համար ի՞նչ պատճառաբանութիւններ կընեն : Դիւրաւ պիտի խմանաք որ բոլոր այդ պատճառաբանութիւնները սա խօսքին մէջ կ'ամփոփին. «Սեւամորթին և ճերմակին մէջ այնչափ շատ տարբերութիւն կայ, որ ասոնք մի եւ նոյն տեսակէ չեն կրնար ըլլալ » :

Դուք ալ այն ատեն կը սլատասխանէք անոնց, գամիւղին (չօպան քէօքէյի) և բարակին (թագը) մէջ աւելի մեծ տարբերութիւն կայ, քան թէ Նւրուպացիին և Ափրիկէցիին մէջ, բայց և այնպէս, գամիւղն ալ չուն է, բարակն ալ:

Թերեւս աւելցընեն անոնք թէ, ինչպէս մի եւ նոյն սկզբնական մարդը, ինչ որ ալ ըլլան անոր յակութիւնները, կրնայ ծնանիլ թէ ճերմակ մարդը և թէ սեւամորթը:

Ասոր ալ կը սլատասխանէք թէ, ինչպէս վայրենի հնդկահաւը՝ որուն ծագումը գիտենք, որուն նախնիքը կը ճանչնանք, թէ ինչպէս վայրի ճագարը՝ որ գեռ մօտերնիս կը գտնուին, կրցեր են ծնունդ տալ մեր բոլոր ընտանի ցեղերուն:

Դարձեալ կըսեմ որ ճշդիւ չենք կրնար բացատրել ինչպէսը և ինչո՞ւ համարը, բայց սա գիտենք որ իրողութիւնը կեցած է, և անոր ընդհանուր բացատրութիւնն ալ կը գտնէք գոյութեան պայմաններուն մէջ:

Ուստի մարդս, որ հնդկահաւէն և ճագարէն շատ ժամանակ յառաջ սկսած է երկրիս վրայ սլտալ, մարդս՝ որ հագարաւոր տարիներէ՝ ի վեր երկրիս մակերեւոյթին վրայ է, գոյութեան այլադան և իրարու հակառակ պայմաններու կը տոկայ և կը կրէ զանոնք, իւր բարութքը, սովորութիւններու-



Վր : ապրելու եղանակաւը , անձին պահ-  
պանութեանը համար տարած տուաւել կամ  
նուազ խնամօքը) փոփոխութեան պատճառ-  
ները կը շատցնէ : մարդս կըսեմ , մեր յիշած  
անասուններէն անշուշտ աւելի փոփոխու-  
թեանց պայմաններու մէջ գտնուած է : Ու-  
րեմն զարմանալի բան չէ որ մարդկային  
խումբերը այնպիսի տարբերութիւններ ներ-  
կայացնեն , որոնց օրինակները հոս կը տես-  
նենք : Այլ է զարմանալու բան մը կայ նէ ,  
այն ալ այս տարբերութեանց շատ մեծ բա-  
նէր չըլլալն է :

Մէկէն աւելի մարդկային տեսակներ կան  
քառյներուն (polygenist) դուք ալ սա հար-  
ցուցէք թէ , ինչպէս կ'ըլլայ որ ճերմակ մար-  
դը Ամերիկայի և Բօլիւնէզիայի պէս հակոտ-  
նեայ երկիրներ կերթայ , և բոլորովին իրմէ  
տարբեր մարդկային խումբերու հետ կը խառ-  
նազուգի , և թէ ի՞նչպէս կ'ըլլայ որ իւր զու-  
գաւորութիւնները միշտ արդիւնաւոր կ'ըլ-  
լան , և իւր ամէն դացած տեղերը հեռքեր  
կը ձգէ խառնածին ժողովուրդներ արտա-  
դրելով :

Թէ որ քիչ մը աւելի պնդէք , ընդդիմա-  
խօսնիւ պիտի տեսնէք , որ շատ անգամ տե-  
սակին իրական բան մը ըլլալն ալ պիտի ժըլ-  
տէ , և ասով բոլոր բնադիտաց հակառակ  
գտնուած պիտի ըլլայ առանց բացառու-



թեան, հետեւաբար Պիւթօնի, Դուանթօ-  
ռի, Ժիւսիէօյի, Քիւմէյի, Ժօֆուռա—Սէնթ  
իլէոի ետեւէն եկող բոլոր մեծահանձար ան-  
ճանց հակառակ գտնուած պիտի ըլլայ : Ե-  
րանք ամէն տեսակ միճարանութենէ հեռու  
մնալով և առանց իսկ մարդու նկատմամբ  
խորհելու բուսականաց և անասնաց զննու-  
թեան հետամուտ եղան :

Բազմատեսակեանք (polygéniste) այս կեր-  
պով, ամենէն հաստատուն գիտութեանց  
հետ ալ անհամաձայն գտնուած կըլլայ :

Պիտի տեսնէք որ երբեմն ալ պիտի ըսէ-  
նա, թէ մարդս բացառութիւն մ'է, թէ  
իրեն համար մասնաւոր օրէնքներ ունի, թէ  
բուսականներէն և անասուններէն առնուած  
ապացոյցները մարդու նկատմամբ բան մը  
չեն կրնար հաստատել : Այն ժամանակ յա-  
նուն բնախօսութեան, յանուն ամենայն  
բնական գիտութեանց պատասխանեցէք  
անոր, թէ բոլորովին կը սխալի :

Որչափ որ անկենդան մարմնոյ մը հա-  
մար անկարելի բան է, անգործարանաւոր  
մարմնոց վրայ իշխող օրէնքներէն ազատ ըլ-  
լալ, այնչափ եւս անկարելի է որ գործա-  
րանաւոր և կենդանի էակ մը՝ գործարանա-  
ւորութեան և կենաց օրէնքներէն ազատ  
ըլլայ : Ուրեմն մարդս գործարանաւոր և  
կենդանի էակ մը ըլլալով, ենթակայ է բո-

լոր ընդհանրական օրինաց և միանգամայն  
խառնադուլութեան օրինաց : Ասլա ուրեմն  
այն եզրակացութիւնը , զոր քիչ մը յառաջ  
հանեցինք , օրինաւոր է , և զայն հերքելու  
համար գործածուած առարկութեանց բը-  
նութիւնը 'ի նշալատ անոր (եզրակացութեան)  
մէկ նոր փաստ մ'է :

---









15

ԳԻՆ 60 ՓՐՅ















